Կարգապահական գործ ԿԳ-14110

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի փետրվարի 5-ի թիվ 36-րդ նիստ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/31-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Լուսինե Սահակյանի, Կարեն Սարդարյանի, Մարտուն Փանոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Արթուր Գրիգորյանին (արտոնագիր թիվ 255) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

Պալատում 01.08.2014 թ.-ին ստացվել է Ռոզա Մինասյանի դիմումը, որով նա հայտնվել է, որ 2007թ. փետրվարի 22-ին իր և փաստաբան Արթուր Գրիգորյանի միջև կնքվել է պայմանագիր՝ քաղաքացիական գործով իրավաբանական ծառայություններ մատուցելու կապակցությամբ, որի համար Դիմողը վճարել է 150.000 դրամ: Պայմանագրի պայմանները պատասխանողը կատարել է ոչ բարեխիղճ, դատը տանուլ է տվել դատական ատյաններում: Փաստաբանի առաջարկով որոշել են դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան, որի համար, հարազատների միջոցով վճարել են 150.000 դրամ: 2011թ. վերադառնալով Երևան, երկար փնտրելուց հետո հանդիպել են փաստաբանին: Վերջինս իրենց է տրամադրել գործով դատական ակտերը և Մարդու իրավունքների եվրոպական դատարան ուղարկված դիմումի օրինակը:

Դրանից հետո, չնայած բազմաթիվ հեռախոսազանգերին, խուսափել է հանդիպումներից, պատճառաբանելով, որ սպասում է դատարանի պատասխանին: Խսոստացել է պարզել դատարանից պատասխան չստանալու պատճառը: Մի քանի տարի խաբված սպասելով, իրենց նախաձեռնությամբ պարզել են, որ իրենց գործը Մարդու իրավունքների եվրոպական դատարան չի ուղարկվել, իրենք փաստաբանի մեղքով բաց են թողել դատարան դիմելու վեցամսյա ժամկետը:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 29.08.14թ. թիվ 311-Ա/ԿԳ-14110 որոշմամբ փաստաբան Արթուր Գրիգորյանի նկատմաբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.6.1. կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Կարգապահական գործը 04.09.2014թ-ին հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող Համլետ Ստեփանյանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Դիմողը Խորհրդի նիստերի մասին ծանուցված լինելով, Հայաստանի Հանրապետությունից դուրս բնակվելու պատճառաբանությամբ նիստերին չի ներկայացել և բացատրություն չի տվել, սակայն իր հարազատների միջոցով Խորհրդին է ներկայացրել փաստաթղթեր:

Դիմողը բացատրություն է տվել նախապատրաստողին, որում մասնավորապես նշել է, որ փաստաբան Ա. Գրիգորյանը պայմանագրային կարգով իրեն մատուցել է ծառայություններ, որի շրջանակներում՝ 2009թ. առաջին ամիսներին պետք է դիմեր Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Հայտնել է, որ դիմումը ուղարկել է և իրենց է տրամադրել դրա օրինակը, սակայն փոստային կտրոն չի տվել: 2011 թվականից եղել է սպասողական դրություն, պարբերաբար զանգահարել են, փորձել են գտնել Փաստաբանին, որպեսզի իմանան գործի ընթացքի մասին, սակայն նրան գտնելը եղել է շատ դժվար: Զանգերին չի պատասխանել, իսկ եթե պատասխանել է, ապա գործի մասին ոչինչ չի հայտնել, ասելով որ ինքը կզանգահարի: Այսպես շարունակվել է մինչև 2014թ., որից հետո փաստաբանը այցելել է իրենց տուն և հայտնել, որ դատարանից դեռևս պատասխան չկա: 2014թ. մարտից փորձում են գտնելն փաստաբանին, զանգահարում են, սակայն ապարդյուն: Ա. Գրիգորյանը չի պատասխանում

զանգերին և չի տեղեկացնում իրենց գործերի մասին:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Պատասխանողը Խորհրդի նիստերի մասին ծանուցված լինելով Խորհրդի նիստերին չի ներկայացել և բացատրություն չի տվել:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Վկաներ չեն հրավիրվել և ցուցմունք չեն տվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

Նախապատրաստողը 03.11.2014թ-ին եզրակացություն է տվել այն մասին, որ հիմք ընդունելով Վարույթի կարգի 22-րդ կետը, այն, որ համաձայն Վարույթի կարգի 9-րդ կետի 3-րդ ենթակետի, 15 կետի 3-րդ ենթակետի՝ Պատասխանողը պարտավոր լինելով տալ բացատրություններ, խուսափել է դրանից, որի պարագայում դիմումում բովանդակված՝ գործի ընթացքի մասին Դիմողին չտեղեկացնելու, հեռախոսազանզերին չպատասխանելու և հանդիպումներից խուսափելու փաստը կարող են համարվել ապացուցված և գտել է, որ Պատասխանողը կատարել է Փաստաբանի վարքագծի կանոնակարգի 3.6.1 կետով նախատեսված արարքը՝ որպես պարտավորություն վստահորդին կանոնավորապես չի տեղեկացրել հանձնարարության կատարման ընթացքի մասին և չի պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Կողմերը եզրակացության վերաբերյալ առարկություններ չեն ներկայացրել:

Գործը Խորհրդին է հանձնվել 07.11.2014թ-ին:

Խորհրդի նիստեր են նշանակվել 25.12.2014թ. ժամը՝18:20-ին և 05.02.2015թ. ժամը՝18:45-ին, Երևան քաղաքի Զաքյան փող. 2 շենք, 4-րդ հարկի 12 սենյակում:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի

առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1) «Ջի ընդ Այ» ՍՊԸ-ի, ի դեմս տնօրեն Արթուր Գրիգորյանի, հետ 2007թ. փետրվարի 22-ին կնքվել է իրավաբանական ծառայություններ մատուցելու մասին պայմանագիր, այն մասին, որ Ընկերությունը, որպես Կատարող, Դիմողի և Սուսաննա Հարությունյանի շահերը պետք է ներկայացնի դատարաններում: Նույն օրը Դիմողը լիազորագիր է տվել Պատասխանողին և վճարվել է 150.000 դրամ, որպիսի փաստերը հաստատվում են 2007թ. փետրվարի 22-ին կնքված՝ իրավաբանական ծառայություններ մատուցելու մասին պայմանագրով, նույն օրը Դիմողի կողմից Պատասխանողին տրված լիազորագրով, դրամարկղի մուտքի անդորրագրով և Դիմողի բացատրությամբ:

2) Պատասխանողը Դիմողի շահերը ներկայացրել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում քննվող թիվ 2-2760/2007 քաղաքացիական գործով՝ ըստ հայցի Ռոզա Մինասյանի և Սուսաննա Հարությունյանի ընդդեմ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի և «ԳՐԻԱՐ» ՓԲԸ-ի՝ պայմանագրեր կնքել հարկադրելու և համապարտության կարգով գումար բռնագանձելու պահանջի մասին, այնուհետև նույն գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում, ինչպես նաև նույն գործով բերել է վճռաբեկ բողոք: Հայցը և վերաքննիչ բողոքը մերժվել են, իսկ վճռաբեկ բողոքը վերադարձվել է, որպիսի փաստերը հաստատվում են Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 20.07.2007թ. վճռով, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.08.2008թ. որոշմամբ և ՀՀ վճռաբեկ դատարանի 24.11.2008թ. որոշմամբ:

3) Դիմողն ու Պատասխանողը պայմանավորվել են, որ Պատասխանողը Դիմողի և Սուսաննա Հարությունյանի անունից Դիմում կներկայացնի Մարդու իրավունքների եվրոպական դատարան, ինչի համար Դիմողը վճարել է 150.000 դրամ, սակայն Պատասխանողը նման դիմում չի ներկայացրել, թեև Դիմողին վստահեցրել է, որ նման դիմում ներկայացվել է, տրամադրել է նաև անգլերեն լեզվով գրված և իր ստորագրությամբ Դիմումի տեքստը, սակայն այնուհետև խուսափել է Դիմողի հետ հանդիպումներից, նրա հեռախոսազանգերին պատասխանելուց և մատուցված ծառայությունների մասին տեղեկատվության տրամադրումից: Դիմողը և Սուսաննա Հարությունյանը Պատասխանողից չստանալով տեղեկատվություն, դիմել են Մարդու իրավունքների եվրոպական դատարան և ստացել պատասխան այն մասին, որ իրենց անունից դիմում մուտք չի արվել, որպիսի փաստերը հաստատվում են 16.12.2008թ. դրամարկղի մուտքի օրդերով, որով վճարումը կատարվել է վճռաբեկ դատարանի 24.11.2008թ. որոշումից հետո, Պատասխանողի կողմից կազմված Մարդու իրավունքների եվրոպական դատարանին ուղղված 19.05.2009թ. թվագրմամբ Դիմումով, որը,

սակայն, չի ուղարկվել, Դիմողի և Սուսաննա Հարությունյանի կողմից Մարդու իրավունքների եվրոպական դատարանին ուղղված գրությամբ, ստացված 26.06.2014թ. պատասխանով այն մասին, որ Դիմողի և Սուսաննա Հարությունյանի գրությունում նշված դիմումը Մարդու իրավունքների եվրոպական դատարան մուտք չի եղել, ինչպես նաև Դիմողի բացատրությամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները</u>.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 05.02.2015թ-ին տրված տեղեկանքի համաձայն՝ 2006թ. Ընդունված Փաստաբանի վարքագծի կանոնակարգի 22-րդ հոդվածի խախտման համար Պատասխանողի նկատմամբ Խորհրդի 06.04.2012թ. թիվ 2ԿԳ/1-Ա որոշմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն, որը մարվել է: Անդամավճար վճարելու պարտականությունը խախտելու համար 29.10.2012թ. թիվ 18ԿԳ/1-Ա որոշմամբ Պատասխանողի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ, որը նույնպես մարվել է: Անդամավճար վճարելու պարտականությունը խախտելու համար Խորհրդի 25.12.2014թ. թիվ ԿԳ-14163-Ա որոշմամբ Պատասխանողի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն, որը չի մարվել:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը</u>.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արթուր Գրիգորյանը թույլ է տվել Կանոնագրքի 3.6.1 ենթակետի խախտում և ենթակա է կարգապահական պատասխանատվության, ստորև նշված պատճառաբանությամբ:

Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի (այսուհետ՝ Կարգ) 9-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «*Պատասխանողը պարտավոր է՝*

ա) Նախապատրաստողի պահանջով ներկայացնել գրավոր բացատրություններ,

բ) Նախապատրաստողի եզրակացությունը ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում Պալատի խորհրդին ներկայացնել գրավոր առարկություններ, եթե ամբողջովին կամ մասամբ համաձայն չէ Նախապատրաստողի եզրակացության հետ: Առարկությունների մեջ Պատասխանողը պարտավոր է նշել իր փաստարկները Նախապատրաստողի եզրակացության մեջ տեղ գտած փաստերի և ապացույցների գնահատականի վերաբերյալ: Սույն հոդվածով սահմանված ժամկետում գրավոր առարկություններ չներկայացնելը Պալատի խորհուրդը կարող է որակել, որպես Պատասխանողի կողմից Նախապատրաստողի եզրակացության ընդունում»:

Խորհուրդն արձանագրում է, որ Պատասխանողը ոչ Նախապատրաստողի մոտ և ոչ էլ Խորհրդի նիստերին չի ներկայացել և բացատրություն տալու

պարտականությունը չի կատարել, նախապատրաստողի եզրակացությունը ստանալուց հետո գրավոր առարկություններ չի ներկայացրել և Դիմողի ներկայացրած փաստերի դեմ, չի առարկել, որպիսի փաստական հանգամանքները Պալատի Խորհուրդը որակում է որպես Պատասխանողի կողմից Նախապատրաստողի եզրակացության ընդունում:

Կանոնագրքի 3.6.1 ենթակետի համաձայն. «*Փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին*»:

Պալատի Խորհուրդը գտնում է, որ փաստաբանի կողմից հանձնարարությունը ստանձնելու պահից սկսվում է դրա կատարման ընթացքը և փաստաբանն այդ պահից սկսած պարտավոր է կանոնավորապես վստահորդին տեղեկացնել հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրա հարցերին:

Նշված դրույթի պահանջն, ի դեպ, ենթադրում է վստահորդին հավաստի տեղեկատվության տրամադրում, իսկ ոչ հավաստի տեղեկատվության տրամադրումը, ինչպես նաև հանձնարարությունը կիսատ թողնելը, չկատարելը, սակայն այդ մասին վստահորդին չհայտնելը, Կանոնագրրքի 3.6.1 ենթակետի խախտում է:

Խորհրդի կողմից հաստատված փաստերը, Պատասխանողի կողմից Նախապատրաստողի եզրակացության դեմ չառարկելը համադրելով վերը նշված կանոնների հետ, Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը ոչ միայն Դիմողին կանոնավորապես չի տեղեկացրել հանձնարարության կատարման ընթացքի մասին, այլ նաև նրան ոչ հավաստի, իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն է տվել՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմումը ներկայացրած չլինելու պայմաններում՝ Դիմողին տրամադրելով անգլերեն լեզվով գրված դիմումի տեքստ և հավաստիացնելով, որ այն ուղարկվել է Եվրոպական դատարան, իսկ դրանից հետո էլ, երբ Դիմողին հաջողվել է կապ հաստատել պատասխանողի հետ, վերջինս հավաստիացրել է, որ սպասում է պատասխանի:

Քննարկվող վարքագծի կանոնը փաստաբանի համար նախատեսում է վստահորդին հանձնարարարության ընթացքի մասին տեղեկացնելու և վստահորդին հետաքրքրող հարցերին պատասխանելու ***կանոնավոր պարտականություն, որը փաստաբանի համար սկսվում է հանձնարարությունն ընդունելու պահից և տվում է վստահորդին իրավական օգնություն ցույց տալու ամբողջ ժամանակահատվածում:***

Նշվածի հաշվառմամբ Խորհուրդն արձանագրում է, որ փաստաբան Արթուր Գրիգորյանի կողմից Դիմողի հանձնարարությունը կատարելու ընթացքում կատարվել է Կանոնագրքի 3.6.1 ենթակետի իմաստով որպես շարունակական բնորոշվող խախտում: Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի նկատմամբ պետք է կիրառվի խիստ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին

մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով, 8 (ութ) ակադեմիական ժամ ժամաքանակով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նա ունի նկատողության ձևով կարգապահական տույժ, որը մարված չէ, ինչպես նաև այն, որ նա ոչ միայն խուսափել է Դիմողին հանձնարարության մասին տեղեկություններ տրամադրելուց, այլ նաև ներկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի, 39.9. հոդվածի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արթուր Գրիգորյանին (արտոնագիր թիվ 255) ճանաչել մեղավոր «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 3.6.1 ենթակետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Արթուր Գրիգորյանի (արտոնագիր թիվ 255) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով, 8 (ութ) ակադեմիական ժամ ժամաքանակով:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Արթուր Գրիգորյանին և դիմողին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

Նիստը նախագահող՝ **Կարեն Մեժլումյան**